ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/341

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21488-2021 գրությամբ Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 14.12.2021թ. թիվ 24/1-5/31214ել գրության հիման վրա, 27.12.2021թ. թիվ 26/26-1/21488-2021 գրությամբ նախաձեռնել Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Սմբատ Խաչատրյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Սմբատ Խաչատրյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Սմբատ Խաչատրյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/341 ընթացակարգի շրջանակներում 30.12.2021թ. ժամը 09:35-ին և 10.01.2022թ. ժամը 10:12-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.12.2021թ. թիվ 24/1-5/31214ել գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով պետք է իրականացվեն՝ ՀՀ ք. Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում հենապատերի վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2- ի՝ 183 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե՝

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը՝ մասնավորապես Սարալանջի փողոցի 165 տան հարակից տարածքում և Սարի Թաղի 5-րդ շարք 157-րդ տան հարակից տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքները Կապալառուի կողմից կատարվել են /աշխատանքի գինը կազմել է 2.769.400 ՀՀ դրամ, որը մեր կողմից վճարվել է/, իսկ աշխատանքների մյուս մասը Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ

ժամկետում իրականացնել մյուս հենապատերի վերանորոգման աշխատանքները, սակայն նշված պարտավորությունները չեն կատարվել:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 11.08.2021թ. 24/2-8/18933ել գրության և 16.07.2021թ. 24/1-8/16741ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /մասնակի/ հրաժարվում է «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի հետ կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի չկատարված մասից /Երևան քաղաքի Խաղաղ Դոնի 1-ին շենքի հարակից տարածքում գտնվող հենապատի վերանորոգման աշխատանքների չափաբաժնի մասով՝ 1.987.600 ՀՀ դրամի չափով/ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/341 ընթացակարգի շրջանակներում 30.12.2021թ. ժամը 09:35-ին և 10.01.2022թ. ժամը 10:12-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/341 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/341 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Սմբատ Խաչատրյանի միջև 12.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրին կից N 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից 183 օրացուցային օր:

3. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ-ի միջև կնքվել է 05.05.2021թ.-ին, որին կից N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց:

4. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին ուղղված 10.12.2021թ. թիվ 24/1-5/30810Ել ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով պետք է իրականացվեն՝ ՀՀ ք. Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում հենապատերի վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 183 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե՝

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է կողմի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը՝ մասնավորապես Սարալանջի փողոցի 165 տան հարակից տարածքում և Սարի Թաղի 5-րդ շարք 157-րդ տան հարակից տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքները Կապալառուի կողմից կատարվել են /աշխատանքի գինը կազմել է 2.769.400 ՀՀ դրամ, որը մեր կողմից վճարվել է/, իսկ աշխատանքների մյուս մասը Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ ժամկետում իրականացնել մյուս հենապատերի վերանորոգման աշխատանքները, սակայն նշված պարտավորությունները չեն կատարվել:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 11.08.2021թ. 24/2-8/18933ել գրության և 16.07.2021թ. 24/1-8/16741ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական

շրջանի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /մասնակի/ հրաժարվում է «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի հետ կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի չկատարված մասից /Երևան քաղաքի Խաղաղ Դոնի 1-ին շենքի հարակից տարածքում գտնվող հենապատի վերանորոգման աշխատանքների չափաբաժնի մասով՝ 1.987.600 ՀՀ դրամի չափով/ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն <<ԱՅ ԴԻ ԲԱՆԿ>> ՓԲ ընկերություն տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից /որակավորման ապահովում 713.550 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 475.700 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 13.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21488-2021 գրությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 14.12.2021թ. թիվ 24/1-5/31214ել գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Սմբատ Խաչատրյանի միջև 12.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

Պայմանագրին կից N 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից 183 օրացուցային օր:

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ-ի միջև կնքվել է 05.05.2021թ.-ին, որին կից N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց:

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին ուղղված 10.12.2021թ. թիվ 24/1-5/30810Ել ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ

Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով պետք է իրականացվեն՝ ՀՀ ք. Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում հենապատերի վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 183 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե՝

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է կողմի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը՝ մասնավորապես Սարալանջի փողոցի 165 տան հարակից տարածքում և Սարի Թաղի 5-րդ շարք 157-րդ տան հարակից տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքները Կապալառուի կողմից կատարվել են /աշխատանքի գինը կազմել է 2.769.400 ՀՀ դրամ, որը մեր կողմից վճարվել է/, իսկ աշխատանքների մյուս մասը Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ ժամկետում իրականացնել մյուս հենապատերի վերանորոգման աշխատանքները, սակայն նշված պարտավորությունները չեն կատարվել:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 11.08.2021թ. 24/2-8/18933ել գրության և 16.07.2021թ. 24/1-8/16741ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /մասնակի/ հրաժարվում է «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի հետ կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի չկատարված մասից /Երևան քաղաքի Խաղաղ Դոնի 1-ին շենքի հարակից տարածքում գտնվող հենապատի վերանորոգման աշխատանքների չափաբաժնի մասով՝ 1.987.600 ՀՀ դրամի չափով/ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն «ԱՅ ԴԻ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից /որակավորման ապահովում 713.550 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 475.700 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 13.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն Հավելված 2-ի:

Պայմանագրին կից N 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների ***տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից 183 օրացուցային օր***:

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքների ***տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը*** Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Նարինե Վարդանյան Խաչիկի Ա/Ձ-ի միջև ***կնքվել է 05.05.2021թ.-ին***, որին կից N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական

աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) ***Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Սմբատ Խաչատրյանը խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 12.05.2021թ. կնքված Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը՝ 183 օրացուցային օր, ինչի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2021թ. թիվ 26/26-1/21488-2021 գրությամբ Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Սմբատ Խաչատրյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ